

Բնապահպանական մշտադիտարկման

կիսամյակային հաշվետվություն

Ծրագրի համար՝ 42145

2024թ. հուլիս-դեկտեմբեր

Հայաստան՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր (Տրանշեր 1 և 2)

Պատրաստվել է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից Ասիական զարգացման բանկի համար:

Բնապահպանական մշտադիտարկման սույն հաշվետվությունը վարկառուի փաստաթուղթն է: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱԶԲ տնօրենների խորհրդի, տնօրինության կամ անձնակազմի տեսակետները և կարող են նախնական լինել:

Ցանկացած երկրի ծրագիր կամ ռազմավարություն մշակելիս, ծրագիր ֆինանսավորելիս կամ տվյալ փաստաթղթում որոշակի տարածաշրջանի կամ աշխարհագրական տարածքի որևէ նշում կատարելիս, Ասիական զարգացման բանկը մտադիր չէ որևէ դատողություն անել ցանկացած տարածաշրջանի աշխարհագրական տարածքի իրավական կամ այլ կարգավիճակի վերաբերյալ:

Ծրագրի համար՝ 42145

2024թ. հուլիս-դեկտեմբեր

Հայաստան՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի
ներդրումային ծրագիր, Տրանշեր 1 և 2

(Ֆինանսավորվում է ԱԶԲ-ի կողմից)

Պատրաստված է

«Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի կողմից

Երևան, Հայաստան

Բովանդակություն

1	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
1.1	Նախաբան.....	1
1.2	Հիմնական տեղեկատվություն	1
1.3	Ծրագրի նկարագրություն	3
1.4	Ծրագրի պայմանագրեր և կառավարում	6
1.5	Ծրագրի գործունեությունը ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում	10
1.6	Ծրագրի նախագծման ցանկացած փոփոխության նկարագրություն	11
1.7	Շինարարական մեթոդների հետ համաձայնեցված ցանկացած փոփոխության նկարագրություն.....	12
2	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..	13
2.1	Բնապահպանական անվտանգության գործողությունների գլխավոր նկարագրություն	13
2.2	Շինարարական տեղամասերի աուդիտ.....	14
2.3	Խնդիրների լուծում	18
2.4	Միտումներ	25
2.5	Շրջակա միջավայրի վրա չնախատեսված ազդեցություններ կամ ռիսկեր	25
3	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	26
3.1	Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում անցկացված մոնիթորինգի վերանայում	26
3.2	Բուսահողի կառավարում	102
3.3	Շինարարական աղբի կառավարում.....	102
3.4	Ծառահատման/ծառատնկման գործընթաց	106
3.5	Առողջություն և անվտանգություն.....	107
3.5.1	Համայնքի առողջություն և անվտանգություն.....	107
3.5.2	Հանրային խորհրդակցություններ և հաղորդակցություն	107
3.5.3	Աշխատակիցների անվտանգություն և առողջություն.....	108
3.6	Վերապատրաստման դասընթաց	110
4	ՏՇՄԿՊ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	111

4.1	ՏՇՄԿՊ վերանայում	111
5	ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	112
5.1	Արդյունավետ պրակտիկա	112
5.2	Բարելավման հնարավորություններ	112
6	ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ	113
6.1	Բողոքներ	113
7	ՀՆԱԳԻՏԱԿԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ/ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	127
8	ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	129
8.1	Ամփոփում	129
8.2	Առաջարկություններ	134
9	2024թ. ՀՈՒԼԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ	135
9.1	ՃԴ-ի և Ինժեների համար	135
9.2	Կապալառուի համար	135
	ՀԱՎԵԼՎԱԾ Ա՝ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ՊԱՀՊԱՆՄԱՆ) ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	137
	ՀԱՎԵԼՎԱԾ Բ՝ ՇԱՄԻՐԱՄ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ 2-Ի ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	140

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԿՇՄԿՊ	Կապալառուի շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԿՊ	Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՆԲՓ	Նախնական բնապահպանական փորձաքննություն
ԲՄՄ	Բնապահպանության գծով միջազգային մասնագետ
ԲԱՄ	Բնապահպանության գծով ազգային մասնագետ
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՏՇՄԿՊ	Տեղանքին հատուկ շրջակա միջավայրի կառավարման պլան
ԵԿՊ	Երթևեկության կառավարման պլան
ՃԴ	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
ԲՄՀ	Բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն
ԲԱԱՄ	Բնապահպանության, առողջության և անվտանգության մասնագետ
ԲՄ	Բնապահպանության գծով մասնագետ
ՊՈԻՀ	Պատշաճ ուսումնասիրության հաշվետվություն

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Նախաբան

Տվյալ Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվությունը ընդգրկում է 2024թ.-ի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածը: Հաշվետվությունը համատեղ պատրաստվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի, «Էգիս Ինթերնեյշնլի», «Կոքս Քնսալթի», «ԱԱԲ Պրոեկտ ՍՊԸ և Ս/ս Դայնեշչանդրա Ռ. Ագրավալ ՍՊԸ» ՀԶ-ի, «Լևանտինա Ինխեներիա Ի Կոնստրուկսիոն» ՀԶ-ի, «Ս.Լ. և Օբրաս Պուբլիկաս Ի Ռեզարդիոսի» Ս.Ա.-ի կողմից:

1.2 Հիմնական տեղեկատվություն

Ի սկզբանե, շինարարական աշխատանքները իրականացվել են «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» Էս.Էյ հայկական մասնաճյուղի և վերջինիս ենթակապալառուների կողմից: Այնուամենայնիվ, ՊԸՊ-ի 15.2 (ե) ենթակետի համաձայն, Գործատուն դադարեցրել է Կապալառուի հետ շինարարական աշխատանքների պայմանագիրը 2019թ. հուլիսի 18-ին: Մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը ծրագրի կառավարումը և տեխնիկական վերահսկման խորհրդատուն ֆրանսիական «Սաֆեժ» և իսպանական «Էպտիսս» ընկերությունների համատեղ ձեռնարկությունն էր: Պայմանագրի ավարտից հետո, ԾԿԽ/Ինժեները շարունակել է Կապալառուի պայմանագրի հետդադարեցման գործընթացները շինարարական աշխատանքների համար: 2020-2021թթ.-ներին միջոցներ են ձեռնարկվել նախագծի իրականացումը շարունակելու համար այլ կապալառու/կապալառուների միջոցով:

Աշխատանքի ընթացքում, որոշվել է, որ Ագարակի պատմական և պահպանման գոտին կարող է ենթարկվել հնարավոր ազդեցությունների շինարարության ընթացքում: Խնդիրը լուծելու նպատակով իրականացվել են հետազոտություններ և հնագիտական պեղումներ: Սույն ուսումնասիրությունների արդյունքում հաստատվեց, որ հնարավոր ազդեցությունները իրապես հնարավոր են: Հետագայում որոշում կայացվեց վերաձևակերպել նախագիծը, ինչը հանգեցրեց տարածքում հայտնաբերված հնագիտական

վայրերը շրջանցող 8 կիլոմետրանոց նոր ճանապարհահատվածի հաստատմանը: Արդյունքում, նախատեսվում է վերսկսել շինարարությունը հետևյալ երկու հատվածներում՝

- Առաջադրանք 1՝ Ագարակի հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)
- Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատվածը (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500):

Միևնույն ժամանակ, «Ճանապարհային դեպարտամենտը» բանակցել և կնքել է պայմանագիր 2020թ. օգոստոսի 10-ին պրն. Վիկտոր Բախտամյանի հետ՝ որպես ՆԲՓ/ՇՄԱԳ խորհրդատու՝ նոր ծրագրի նկարագրությանը և ընթացիկ գործունեությանը համապատասխան՝ Տրանշ-2 8 կմ (կմ 29+600-կմ 37+600) հատվածի շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման փաստաթղթի վերանայման և թարմացման ծառայություններ մատուցելու համար: ՆԲՓ/ՇՄԱԳ-ը թարմացման պահանջը հիմնված է, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի և ԱԶԲ անվտանգության մեխանիզմների պահանջների վրա, (i) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (հոդված 21, կետ 2-2)) 2. փորձաքննության դրական եզրակացության ժամկետը համարվում է ավարտված, եթե 2) նախագծում և հիմնական փաստաթղթերում կատարվել են փոփոխություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա՝ առանց լիազոր մարմնին տեղեկացնելու, (ii) ԱԶԲ անվտանգության մեխանիզմների պահանջներ՝ 25. Համալիր խնդիրներ, (iii) ապահովելով անվտանգության պլանների թարմացումը՝ հիմք ընդունելով մանրամասն ինժեներական նախագիծը և գործողությունների շրջանակի փոփոխությունները: Թարմացված ՆԲՓ/ՇՄԱԳ-ը ներկայացվել է ԱԶԲ և ՀՀ ՇՄՆ: Դրական եզրակացությունը և հաստատումները ստացվել են համապատասխանաբար 06.08.2021թ.-ին և 26.08.2021թ.-ին: Տեղական ՆԲՓ և ՇՄԱԳ փաստաթղթերը տեղադրվել են «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի և ՀՀ ՇՄՆ վեբ կայքերում:

2021թ.-ին նախագծում աշխատանքի է ընդունվել նոր ինժեներ/խորհրդատու՝ նախորդ Կապալառուի կողմից մնացած քանակների հաշվարկման, առկա նախագծերի վերանայման, նոր մրցութային փաստաթղթերի պատրաստման, ինչպես նաև շինարարական աշխատանքների ընթացքում ինժեների պարտականությունները կատարելու համար: Համապատասխան պայմանագիրը կնքվել է «Էգիս Ինթերնեյշնլ» և «Կոքս Քոնսալթ» ՀԶ-ի հետ 2021թ. փետրվարի 25-ին:

Առաջադրանք 1-ի համար, «ՃԴ»-ը ստորագրել է պայմանագիր «Ա.Ա.Բ. Պրոեկտ ՍՊԸ և Դայնեշչանդրա Ռ. Ագրավալ ՍՊԸ» ՀԶ-ի հետ՝ որպես շինարարական կապալառու 2022թ. հոկտեմբերի 28-ին:

Առաջադրանք 2-ի համար, «ՃԴ»-ը պայմանագիր է ստորագրել «Լևանտինա, Ինխեներիա Ի Կոնստրուկսիոն և Օբրաս Պուբլիկաս Ի Ռեգարդիոսի Ս.Ա.» ՀԶ-ի հետ՝ որպես շինարարական կապալառու 2023թ. հոկտեմբերի 3-ին:

Հաշվի առնելով, որ դրական եզրակացությունը անվավեր է ճանաչվել Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին ՀՀ օրենքի համաձայն, բանակցություններ են տարվել «Ճանապարհային դեպարտամենտի» և Բնապահպանության նախարարության (ԲՆ) միջև՝ Տրանշ-2-ի 8 կմ կմ 29+600 - կմ 37+600 շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաստաթղթերը և Տրանշ-2-ի (որը ընդգրկում է 34 կմ հատվածը՝ կմ 37+545 - կմ 71+500) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաստաթղթերը վերանայելու և թարմացնելու համար: ՀՀ ՇՄՆ-ը հաստատել է, որ երկու նախագծերի ՇՄԱԳ-ը թարմացնելու կամ վերանայելու անհրաժեշտություն չկա:

1.3 Ծրագրի նկարագրություն

ՀՀ-ն ընտրել է Բավրա-Երևան-Ագարակ երթուղին՝ որպես Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի մաս, որը պետք է վերականգվի, վերակառուցվի և լայնացվի: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը իրականացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) «Ճանապարհային դեպարտամենտ»-ի կողմից (այսուհետ՝ ՃԴ), որը նշանակվել է՝ որպես

աշխատանքների համակարգող: Ծրագիրը ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից Բազմափուլ ֆինանսավորման գործիքի շրջանակներում (ԲՖԳ):

ԲՖԳ-ն նախագծվել է վերաբնակեցնելու և ընդլայնելու հյուսիս-հարավ ճանապարհները՝ ձևավորելու նոր, արդիականացված և ընդլայնված Հյուսիս-հարավ մայրուղի: Հիմնական նպատակն է ընդլայնել առկա երկուղի ճանապարհները՝ վերածելով քառուղի ճանապարհների հնարավորության դեպքում գոյություն ունեցող ծրագրերի երկայնքով կամ կառուցելով նոր այլընտրանքային երկուղի ճանապարհներ այն հատվածներում, որտեղ մեկ քառուղի ճանապարհը հնարավոր չի լինի կառուցել:

Տրանշ 1-ի նպատակն է բարելավել հյուսիս-հարավ միջանցքի երկու ճանապարհային հատվածները, մասնավորապես՝ Երևանից Աշտարակ Մ-1 ճանապարհը կմ 18+370-ից մինչև կմ 29+773 (Հատված 3՝ Կապալառուի պայմանագրով) և Երևանից Արարատ Մ-2 ճանապարհի կմ 9+312-ից մինչև կմ 47+400 (Հատված 2՝ Կապալառուի պայմանագրով):

Տրանշ 2-ը սկսվում է Աշտարակում կմ 29+600 և ավարտվում Թալինի մոտ կմ 71+500 (Հատված 1՝ Կապալառուի պայմանագրով): Ուջանում կառուցվելու են երկու շրջանցիկ ճանապարհներ՝ սկսած կմ 36+600-ից մինչև 40+300: Ծրագիրը նաև ունենալու է նոր ճանապարհահատված (8.95 կմ) Կաթնաղբյուրում՝ սկսած կմ 59+950-ից մինչև 68+900, որը գտնվելու է առկա մայրուղու ձախ կողմում և միանալու է առկա ծրագրին Թալինում:



Նկար 1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 1 և Տրանշ 2

Տրանշ 2 ծրագիրը հետագայում բաժանվեց 2 մասերի: Խուսափելու համար 32+750 – 33+400 կմ կարևոր հնագիտական տարածքից՝ որոշում կայացվեց վերանախագծել առաջին 8 կմ-ը (Առաջադրանք 1, կմ 29+600 – 37+600) Ագարակ համայնքի տարածքում: Փոփոխված երթուղին անցնում է հետևյալ գյուղական համայնքներով՝ Ոսկեվազ, Ագարակ և Աղձք: Մնացած 34 կմ-ի վրա աշխատանքները (Առաջադրանք 2) միայն մասամբ էին ավարտվել, երբ շինարարական պայմանագիրը դադարեցվեց 2019թ. հուլիսին: 8 կմ երկարությամբ շրջանցիկ ճանապարհի շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2023թ. հունվարի 16-ին, իսկ 34 կմ երկարությամբ ճանապարհի շինարարության ավարտի մեկնարկը տրվել է 2023թ. նոյեմբերի 13-ին:

1.4 Ծրագրի պայմանագրեր և կառավարում

Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ԱԶԲ-ը կանոնավոր կերպով իրականացնում է դիտարկումներ և ստուգումներ՝ ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (SPS 2009) չափանիշներին և պահանջներին համապատասխան: ԱԶԲ-ը կաջակցի ՃԴ-ին սոցիալական և բնապահպանական ազդեցություններ ու ռիսկերը կառավարելու նպատակով, այդպիսով նպաստելով երկարաժամկետ ներդրումների կայունության խթանմանը:

Կոնտակտային տվյալներ՝

Հասցե՝ Վ. Սարգսյան փողոց, Կամար բիզնես կենտրոն, 7^{րդ} հարկ
0010 Երևան, ՀՀ
Հեռ.՝ +374 10 512300,
Ֆաքս՝ +374 10 546374
Կայք՝ www.adb.org/armenia

ՃԴ-ն իրականացնում է ծրագրի իրականացման կառավարում օրական կտրվածքով և ներառում է սոցիալական և բնապահպանական անձնակազմ, որի պատասխանատվությունների թվին են պատկանում ծրագրի ամբողջ բնապահպանական և սոցիալական հարցերի կառավարումը:

Կոնտակտային տվյալներ՝

Հասցե՝ Կառավարական տուն 3, Հանրապետության հրապարակ
0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 10 511 391
Էլ. հասցե՝ info@armroad.am
www.armroad.am

Վերահսկող խորհրդատու/ինժեներ համատեղ ձեռնարկությունը՝ «Էգիս Ինթերնեյշնլ» և «Կոքս Քոնսալթ Գմբհ», իրականացնում է նախագծի ամբողջ շինարարական վերահսկողության աշխատանքները և հաշվետվությունները: Խորհրդատուի Բնապահպանության անվտանգության մարմինը պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկման համար՝ շրջակա միջավայրի և հնագիտական ազդեցության տեսանկյունից, մասնավորապես, նաև ՇՄԿ իրականացման մեջ Կապալառուի աշխատանքի վերահսկման և հաշվետվություն

ներկայացնելու վերաբերյալ:

Առաջադրանք 1-ի և Առաջադրանք 2-ի համար՝

Կոնտակտային տվյալներ՝

Հասցե՝ 15, Կենտրոնական պողոտա -CS 20538

Գյուանկուր – 78286 Սեն Քանտեն ան Իվլին Սեդեքս, Ֆրանսիա

Հեռ.՝ +33 139415070

Էլ. հասցե՝ richard.thadani@egis.fr

Առաջադրանք 1-ի համար՝

Կապալառու Հ/Ձ «ԱԱԲ Պրոեկտ ՍՊԸ Դայնեշչանդրա Ռ. Ագրավալը»՝ որպես շինարարական կազմակերպություն, իրականացնում է շինարարական աշխատանքներ: Կապալառուի բնապահպանական մարմինը պատասխանատու է Կապալառուի ԲԿՊ-երի, ՏՇՄԿՊ-երի պատրաստման և իրականացման համար, ինչպես նաև շինարարական աշխատանքների և հաշվետվության մոնիթորինգի:

Կոնտակտային տվյալներ՝

Հասցե՝ Գևորգ Ստեփանյան փողոց, 1ա շենք

0037 Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ +374 44 999333

Էլ. հասցե՝ info@aab.am

Կայք՝ www.aabconstruction.com

Առաջադրանք 2-ի համար՝

Կապալառու Հ/Ձ «Լևանտինա, Ինխեներիա ի Կոնստրուկսիոն», «Ս.Լ. և Օբրաս Պուբլիկաս ի Ռեգարդիոսի» Ս.Ա.-ն՝ որպես շինարարական կազմակերպություն իրականացնում է շինարարական աշխատանքներ: Կապալառուի բնապահպանական մարմինը պատասխանատու է Կապալառուի ԲԿՊ-երի, ՏՇՄԿՊ-երի պատրաստման և իրականացման համար, ինչպես նաև շինարարական աշխատանքների և հաշվետվության մոնիթորինգի:

Կոնտակտային տվյալներ՝

Հասցե՝ Փ/ Ռամոն Գալդոն, 10 PC. 46260

Ալբերիկ (Վալենսիա) ԻՍՊԱՆԻԱ

Հեռ.՝ +34 962441713

Էլ. հասցե՝ lic@lic-sl.com

ՃԴ բնապահպանական և սոցիալական անձնակազմ

Ծրագրի բնապահպանական ազդեցության կառավարման աշխատանքները ստանձնել են՝

- Մարիամ Թաթուլյանը, ով աշխատանքի է ընդունվել ՃԴ-ում 2023թ. ապրիլին՝ որպես բնապահպանական ազդեցության հարցերով մասնագետ, պատասխանատու է ծրագրի շրջակա միջավայրի կառավարման և ՀՀ բնապահպանական ազգային օրենսդրության համապատասխանության, ինչպես նաև ծրագրերի նախապատրաստման և իրականացման ընթացքում դոնորների ֆինանսավորման պաշտպանական քաղաքականությունների, ներառյալ՝ նախագծման, շինարարության և վերահսկողության համար:
- Շուշան Քոչարյանը՝ սոցիալական ազդեցությունների կառավարման ծառայության ղեկավարի պաշտոնակատարը, պատասխանատու է ծրագրի սոցիալական կառավարման և ՀՀ ազգային օրենսդրության համապատասխանության համար, ինչպես նաև ծրագրերի իրականացման ընթացքում դոնորների ֆինանսավորման պաշտպանական քաղաքականությունների, ներառյալ՝ շինարարության և վերահսկողության համար:

Խորհրդատուի բնապահպանական անվտանգության մարմին

Ներկայումս, և՛ *Առաջադրանք 1-ի*, և՛ *Առաջադրանքի 2-ի* համար, Խորհրդատուի բնապահպանական անվտանգության մարմինը բաղկացած է՝

- Արսեն Հայրիյան՝ բնապահպանության/առողջության և անվտանգության

հարցերով մասնագետ, ով պատասխանատու է շրջակա միջավայրի անվտանգության ամբողջական կառավարման համար: Նրան փոխարինել են 2023թ. դեկտեմբերին: Դրանից հետո, Ինժեները աշխատանքի է հրավիրել Կարինե Ազատյանին:

- Ջուլիետտա Հակոբյան՝ սոցիալական հարցերով մասնագետ (ՍՍ), ով պատասխանատու է սոցիալական անվտանգության ամբողջական կառավարման համար:
- Բորիս Գասպարյան՝ հնագիտության մասնագետ, ով պատասխանատու է հնագիտական անվտանգության ամբողջական կառավարման համար:

Կապալառուի բնապահպանական անվտանգության մարմին

Առաջադրանք 1-ի համար, Կապալառուի բնապահպանական անվտանգության բաժինը բաղկացած է՝

- Միքայել Թևոսյան՝ բնապահպանության մասնագետ (ԲՄ), ով պատասխանատու է Կապալառուի գործունեությունը համապատասխանեցնել ԱԶԲ-ի անվտանգության բնապահպանական մասին:
- Արման Խաչատրյան՝ սոցիալական մասնագետ (ՍՍ), ով պատասխանատու է Կապալառուի գործունեությունը համապատասխանեցնել ԱԶԲ անվտանգության սոցիալական մասին:
- Դավիթ Ղամբարյան՝ առողջության և անվտանգության մասնագետ (ԱԱՄ), ով պատասխանատու է համապատասխանեցնել Կապալառուի գործողությունները ԱԶԲ անվտանգության քաղաքականության առողջության և անվտանգության մասին: Մասնագետը ստանձնել է իր պարտականությունները 2024թ. հոկտեմբերի 1-ին:
- Հայկ Հայրոսյան՝ հնագիտության մասնագետ, ով պատասխանատու է պատմական, մշակութային և հնագիտական հուշարձանները պաշտպանել շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած բացասական հետևանքներից ՇՄԿՊ-ի իրականացման շրջանակներում:

Առաջադրանք 2-ի համար, Կապալառուի բնապահպանական անվտանգության մարմինը բաղկացած է՝

- Միքայել Թևոսյան՝ բնապահպանական և սոցիալական անվտանգության մասնագետ, ով պատասխանատու է համապատասխանեցնել Կապալառուի գործողությունները ԱԶԲ անվտանգության բնապահպանական և սոցիալական մասին:
- Սերգեյ Խաչատրյան՝ առողջության և անվտանգության մասնագետ (ԱԱՄ), ով պատասխանատու է Կապալառուի գործողությունները համապատասխանեցնել ԱԶԲ Անվտանգության քաղաքականության առողջության և անվտանգության մասին:
- Հայկ Հայրոսյան՝ հնագիտության մասնագետ, ով պատասխանատու է պատմական, մշակութային և հնագիտական հուշարձանները պաշտպանել շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած բացասական հետևանքներից ՇՄԿՊ-ի իրականացման շրջանակներում:

1.5 Ծրագրի գործունեությունը ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում

1. Առաջադրանք 1՝ Ազարակ հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝

1. ընդհանուր և ժայռային հանույթ,
2. լիցք,
3. էլեկտրական մալուխների տեղափոխում,
4. խմելու ջրի խողովակաշարերի տեղափոխում,
5. ոռոգման ջրի խողովակաշարերի տեղափոխում:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ, Կապալառուն աշխատանքի է ընդունել 113 աշխատողի հաշվետու ժամանակահատվածում: Աշխատակազմը բաղկացած է մոտավորապես 4.79% կանանցից և 95.21% տղամարդկանցից:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատվածը (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝

1. ընդհանուր և ժայռային հանույթ,
2. լիցք,
3. ջրահեռացման աշխատանքներ,
4. լուսավորություն խաչմերուկներում,
5. ճանապարհային գծանշումներ, ազդանշաններ, պաստառներ և արգելապատնեշներ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ, Կապալառուն աշխատանքի է ընդունել 178 աշխատողի հաշվետու ժամանակահատվածում: Աշխատակազմը բաղկացած է մոտավորապես 96.44% տղամարդկանցից և 3.56% կանանցից:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա-ում ներկայացված են երկու առաջադրանքների համար իրականացված աշխատանքների լուսանկարները:

1.6 Ծրագրի նախագծման ցանկացած փոփոխության նկարագրություն

1. Առաջադրանք 1՝ Ագարակ հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Առաջադրանք 1-ի համար, նախագծային փոփոխություն է կատարվել գործող մայրուղու շրջանցիկ ճանապարհի վերաբերյալ: Նախագծման տվյալ փոփոխությունը պայմանավորված էր անվտանգության նկատառումներով: Հատկապես, շրջանցման՝ ձախ կողմից՝ 0+340 կմ-ից մինչև 0+380 կմ-ը, առաջին շրջադարձի շառավիղը 60 մ-ից փոխվել է

120 մ-ի: Այս փոփոխությունը կատարվել է՝ կանխելու ավտոմեքենաների բախումները և ապահովելու տարածքում տեղակայված շենքի անվտանգությունը:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատվածը (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Առաջադրանք 2-ի համար, Գործատուն պահանջել է, որ Նոր Եդեսիայի (41+300) «T»-աձև հանգույցը վերակառուցվի՝ դառնալով լիարժեք հանգույց: Սա պահանջեց հավելյալ էստակադայի և նոր մուտքային ճանապարհների նախագծում: Սույն դաշտային նոր ճանապարհները անհրաժեշտ էին այն համայնքների համար, որոնց մուտքը կխաթարվի կամ կկտրվի նոր մայրուղու պատճառով: Բոլոր նշված նախագծային փոփոխությունները ներառվել են բնապահպանական և հնագիտական պատշաճ ուսումնասիրության հաշվետվությունում:

1.7 Շինարարական մեթոդների հետ համաձայնեցված ցանկացած փոփոխության նկարագրություն

Շինարարական մեթոդների հետ համաձայնեցված որևէ էական փոփոխություն չեն եղել հաշվետու ժամանակահատվածում:

2 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Բնապահպանական անվտանգության գործողությունների գլխավոր նկարագրություն

Տրանշ 2-ի 8 կմ հատվածի (կմ 29+600-ից մինչև կմ 37+600) վերանայված ՆԲՓ/ՇՄԱԳ հաշվետվությունները ներկայացվել են ԱԶԲ-ին և ՀՀ ՇՄՆ-ին: Դրական եզրակացությունները և հաստատումները ձեռք են բերվել համապատասխանաբար 2021թ. օգոստոսի 6-ին և 26-ին: Տեղական ՆԲՓ/ՇՄԱԳ փաստաթղթերը հասանելի են դարձել «ՃԴ» հիմնադրամի և ՀՀ ՇՄՆ հանրային հասանելիության կայքերում:

Հաշվի առնելով, որ դրական եզրակացությունը ճանաչվել է անվավեր, համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին ՀՀ օրենքով, բանակցություններ են տեղի ունեցել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի և Շրջակա միջավայրի նախարարության միջև՝ վերանայելու և թարմացնելու Տրանշ-2 8 կմ 29+600 – կմ 37+600-ի և Տրանշ 2-ի (որը ընդգրկում է 34 կմ ճանապարհահատված՝ կմ 37+545 – կմ 71+50) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաստաթղթերը: ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը հաստատել է, որ անհրաժեշտ չէ ՇՄԱԳ-ի վերանայում և թարմացում երկու ծրագրերի համար:

Առաջադրանք 1-ի համար ԿՇՄԿՊ-ը հաստատվել է 2023թ. ապրիլի 24-ին Ծառերի կառավարման պլանի թարմացման պայմանով: ԾԿՊ-ը տրամադրվել է 2024թ. նոյեմբերի 7-ին: Փաստաթուղթը վերանայվել և հաստատվել է Ինժեների կողմից 2024թ. նոյեմբերի 11-ին:


Հետևելով նոր նախագծի փոփոխություններին՝ ԱԶԲ-ն պահանջել է պատշաճ ուսումնասիրության հաշվետվություն **Առաջադրանք 2-ի** համար, որը պատրաստվել, հաստատվել և հրապարկվել է 2024թ. հոկտեմբերին: Դրանից հետո, ՏՇՄԿՊ-ն թարմացվել է, ըստ ՊՈԻՀ-ի, և սպասում է հաստատման:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը իրականացնում է ծրագրի իրականացման ամենօրյա կառավարում: «ՃԴ» հիմնադրամը ներառում է սոցիալական և

բնապահպանական անձնակազմ, որոնց պատասխանատվությունների թվում են ծրագրի ամբողջ սոցիալական և բնապահպանական գործոնների կառավարումը:

Վերահսկող խորհրդատու/ինժեները իրականացնում է ամբողջ շինարարական գործողությունները և ծրագրի հաշվետվությունը: Խորհրդատուի բնապահպանական անվտանգության մարմինը պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկման համար՝ բնապահպանական և հնագիտական ազդեցությունների հետ կապված, մասնավորապես, Կապալառուի կողմից ԲԿՊ-ի իրականացման ընթացքում կատարման վերահսկման և հաշվետվությունների ներկայացման համար:

Կապալառուները իրականացնում են շինարարական աշխատանքներ: Կապալառուի բնապահպանական մարմինը պատասխանատու է Կապալառուի ԲԿՊ-երի, ՏՇՄԿՊ-երի պատրաստման և իրականացման համար, ինչպես նաև շինարարական աշխատանքների մոնիթորինգի և հաշվետվության համար:



2.2 Շինարարական տեղամասերի աուդիտ

Առաջադրանք 1-ի և Առաջադրանք 2-ի համար շինարարական տեղամասի աուդիտները անցկացվել են՝ համաձայն զարգացող մոնիթորինգի ծրագրին, որը հիմնված է ԱԶԲ անվտանգության և ԲԿՊ պահանջների վրա:

Ըստ կանոնի՝ շինարարական տեղամասի մոնիթորինգի հետևյալ գործունեությունները իրականացվել են՝

1. Առաջադրանք 1՝ Ազարակ հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Առաջադրանք 1-ի համար Պատվիրատուի շրջակա միջավայրի մասնագետը Ինժեների և Կապալառուի շրջակա միջավայրի մասնագետները իրականացրել են շինարարական տեղամասերի այցելություններ: Մանրամասն տեղեկատվությունը փաստաթղթավորված է հաստատված ստուգաթերթիկներում և ներկայացվել է առաջընթացի ամսական հաշվետվություններում:

Աղյուսակ 1. Առաջադրանք 1-ի համար անցկացված տեղամասային այցելությունները

Բնապահպանական անձնակազմ	Գործողություններ	Կարգավիճակ
<p>Կապալառուի ԲՄՄ (բնապահպանական և սոցիալական մասնագետ)</p>	<p>Պարբերական մոնիթորինգի տեղամասային այցելությունները իրականացվել են շաբաթական կտրվածքով և արդյունքները զեկուցվել են շաբաթական՝ օգտագործելով հաստատված ստուգաթերթիկի ձևանմուշը:</p> <p>Ամսական հաշվետվություն ինժեներին՝ վերջինիս կողմից կայացած տեղամասի այցելություններին մասնակցելու վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել հուլիսի 9-ին, 11-ին և 23-ին, օգոստոսի 8-ին, 14-ին, 21-ին և 29-ին, սեպտեմբերի 3-ին, 13-ին, 18-ին և 25-ին, հոկտեմբերի 4-ին, 9-ին, 14-ին, 23-ին և 29-ին, նոյեմբերի 6-ին, 18-ին, 22-ին և 26-ին և դեկտեմբերի 6-ին, 13-ին, 18-ին, 20-ին և 27-ին:</p>	<p>Շարունակությունը՝ հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:</p>
<p>Վերահսկող ինժեների ԲՄՄՄ</p>	<p>Պարբերական մոնիթորինգի տեղամասային այցելությունները իրականացվել են ամսական կտրվածքով և արդյունքները զեկուցվել են ամսական՝ օգտագործելով հաստատված ստուգաթերթիկի ձևանմուշը:</p> <p>Տեղամասային այցելությունների մոնիթորինգ եղել է հուլիսի 12-ին և 23-ին, օգոստոսի 23-ին, սեպտեմբերի 13-ին, հոկտեմբերի 9-ին և 14-ին, նոյեմբերի 1-ին և 9-ին և դեկտեմբերի 2-ին:</p>	<p>Շարունակությունը՝ հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:</p>

<p>Գործատուի ԲՄ</p>	<p>Ամսական մոնիթորինգ և ստույգայցեր տեղամասեր: Կիսամյակային հաշվետվություն ներկայացնել ԱԶԲ-ին: Տեղամասային այցելությունների մոնիթորինգ եղել է հուլիսի 15-ին և 23-ին, սեպտեմբերի 13-ին, հոկտեմբերի 9-ին և 14-ին:</p>	<p>Շարունակությունը՝ հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:</p>
<p>ԱԶԲ ԲՄ</p>	<p>ԱԶԲ համատեղ տեղամասային այցելությունը տեղի է ունեցել հոկտեմբերի 14-ին:</p>	<p>Շարունակությունը՝ հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:</p>

2024թ. հոկտեմբերի 10-ից 15-ը վերանայման առաքելությունը տեղի է ունեցել ԱԶԲ-ի կողմից: 2024թ. հոկտեմբերի 14-ին համատեղ տեղամասային այցելությունը տեղի է ունեցել Պատվիրատուի, Ինժեների, Կապալառուի և ԱԶԲ-ի ներկայացուցիչների հետ: Այցելության ընթացքում մասնակիցները շրջել են շինարարական տարբեր տեղամասեր՝ ներառյալ Կապալառուի շինարարական ճամբար և բետոնի գործարան: ԱԶԲ-ն պահանջել է ուղղիչ գործողություններ ձեռնարկել վառելիքի կայանի և ճամբարի կարգուկանոնի վերաբերյալ: Նրանք տեղում քննարկումներ են ունեցել բնապահպանական, սոցիալական, հնագիտական, առողջական և անվտանգության հնարավոր հարցերի վերաբերյալ, որ կարող է առաջանել կամ արդեն գոյություն ունի շինարարական գործընթացի ընթացքում:

Սոցիալական, առողջության, անվտանգության և բնապահպանական պահանջների հետ կապված փաստաթղթավորումը և համապատասխանության առկայությունը ևս քննարկվեցին:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատվածը (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Առաջադրանք 2-ի համար Պատվիրատուի բնապահպանական մասնագետը Ինժեների և Կապալառուի բնապահպանական մասնագետների հետ անցկացրել է տեղամասային այցելություններ: Մանրամասն տեղեկատվությունը փաստաթղթավորվել է հաստատված ստուգաթերթիկում և ներկայացվում է առաջընթացի ամսական հաշվետվություններում:

Աղյուսակ 2. Առաջադրանք 2-ի համար անցկացված տեղամասային այցելությունները

Բնապահպանական անձնակազմ	Գործողություններ	Կարգավիճակ
<p>Վապալառուի ԲՍՄ (բնապահպանական և սոցիալական մասնագետ)</p>	<p>Պարբերական մոնիթորինգի տեղամասային այցելությունները իրականացվել են շաբաթական կտրվածքով և արդյունքները զեկուցվել են շաբաթական՝ օգտագործելով հաստատված ստուգաթերթիկի ձևանմուշը:</p> <p>Ամսական հաշվետվություն ինժեներին՝ վերջինիս կողմից կայացած տեղամասի այցելությանը մասնակցելու վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել հուլիսի 4-ին, 12-ին, 19-ին, 23-ին և 29-ին, օգոստոսի 8-ին, 14-ին, 21-ին և 29-ին, սեպտեմբերի 3-ին, 5-ին, 9-ին, 11-ին, 13-ին, 19-ին և 27-ին, հոկտեմբերի 4-ին, 9-ին, 14-ին, 23-ին և 29-ին, նոյեմբերի 6-ին, 14-ին, 22-ին և 26-ին, դեկտեմբերի 6-ին, 13-ին, 19-ին և 24-ին:</p>	<p>Շարունակությունը՝ հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:</p>
<p>Վերահսկող ինժեների ԲՍՄՍ</p>	<p>Պարբերական մոնիթորինգի տեղամասային այցելությունները իրականացվել են ամսական կտրվածքով և արդյունքները զեկուցվել են ամսական՝ օգտագործելով հաստատված ստուգաթերթիկի ձևանմուշը:</p> <p>Տեղամասային այցելությունների մոնիթորինգ եղել է հուլիսի 12-ին և 23-ին, օգոստոսի 14-ին, սեպտեմբերի 3-ին, 9-ին, 11-ին և 13-ին, հոկտեմբերի 9-ին, նոյեմբերի 14-ին, դեկտեմբերի 9-ին և 14-ին:</p>	<p>Շարունակությունը՝ հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:</p>
<p>Գործատուի ԲՍ</p>	<p>Ամսական մոնիթորինգ և ստուգայցեր տեղամասեր: Կիսամյակային հաշվետվություն ներկայացնել ԱԶԲ-ին</p> <p>Տեղամասային այցելությունների մոնիթորինգ եղել է հուլիսի 15-ին և 23-ին, սեպտեմբերի 13-ին, հոկտեմբերի 9-ին և 14-ին:</p>	<p>Շարունակությունը՝ հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:</p>

ԱԶԲ ԲՄ	ԱԶԲ համատեղ տեղամասային այցելությունը տեղի է ունեցել հոկտեմբերի 14-ին:	Շարունակությունը՝ հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:
---------------	--	--

2024թ. հոկտեմբերի 10-ից 15-ը վերանայման առաքելությունը տեղի է ունեցել ԱԶԲ-ի կողմից: 2024թ. հոկտեմբերի 14-ին համատեղ տեղամասային այցելությունը տեղի է ունեցել Պատվիրատուի, Ինժեների, Կապալառուի և ԱԶԲ-ի ներկայացուցիչների հետ: Այցելության ընթացքում մասնակիցները շրջել են շինարարական տարբեր տեղամասեր՝ ներառյալ Կապալառուի շինարարական ճամբար: Նրանք տեղում քննարկումներ են ունեցել բնապահպանական, սոցիալական, հնագիտական, առողջական և անվտանգության հնարավոր հարցերի վերաբերյալ, որ կարող է առաջանել կամ արդեն գոյություն ունի շինարարական գործընթացի ընթացքում: ՏՇՄԿՊ-ի թարմացումը պահանջվել է՝ պատշաճ ուսումնասիրության հաշվետվությանը համաձայն:

2.3 Խնդիրների լուծում

Առաջադրանք 1-ի համար լուծված խնդիրների ընդհանուր քանակը տվյալ ժամանակահատվածում ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Առաջադրանք 1-ի լուծված խնդիրների ամփոփումը

Ամփոփման աղյուսակ			
Խնդիրների լուծման ընդհանուր քանակը հաշվետու ժամանակահատվածում	10	Խնդիրները՝ ըստ կատեգորիայի	
		Շրջակա միջավայր	4
Չլուծված խնդիրների քանակը հաշվետու ժամանակահատվածում	8	Սոցիալական	1
Լուծված խնդիրների քանակը հաշվետու ժամանակահատվածում	10	Առողջություն	1

Չլուծված խնդիրների քանակը հաշվետու ժամանակահատվածի վերջում	0	Անվտանգություն	2
Հետևյալ խնդիրներից լուծվածների տոկոսը	100%	Այլ	2

Առաջադրանք 2-ի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև՝ (Աղյուսակ 4)

Աղյուսակ 4. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Առաջադրանք 2-ի լուծված խնդիրների ամփոփումը

Ամփոփման աղյուսակ			
Խնդիրների լուծման ընդհանուր քանակը հաշվետու ժամանակահատվածում	8	Խնդիրները՝ ըստ կատեգորիայի	
		Շրջակա միջավայր	2
Չլուծված խնդիրների քանակը հաշվետու ժամանակահատվածում	6	Սոցիալական	3
Լուծված խնդիրների քանակը հաշվետու ժամանակահատվածում	6	Առողջություն	1
Չլուծված խնդիրների քանակը հաշվետու ժամանակահատվածի վերջում	2	Անվտանգություն	1
Հետևյալ խնդիրներից լուծվածների տոկոսը	75%	Այլ	1

Առաջադրանք 1-ի և առաջադրանք 2-ի համար համապատասխանության և անհամապատասխանության մանրամասն ամփոփումը ներկայացված է Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Առաջադրանք 1-ի և առաջադրանք 2-ի համապատասխանության/անհամապատասխանության ամփոփումը

Ամիս	Լիովին համապատասխան	Մասնակի համապատասխան	Անհամապատասխանություն	Անհամապատասխանությունները շտկվել են (Ա/Հ)	Անհամապատասխանությունները չեն շտկվել
ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1					





<i>2024</i>					
Հունվար	35	13	3	1/0	2
Փետրվար	36	12	3	1/0	2
Մարտ	34	14	3	1/0	2
Ապրիլ	38	10	3	1/0	2
Մայիս	40	8	3	1/0	2
Հունիս	41	7	3	1/1	1
Հուլիս	34	13	4	2/0	2
Օգոստոս	44	2	5	2/3	0
Սեպտեմբեր	45	3	3	1/0	2
Հոկտեմբեր	46	1	4	1/0	3
Նոյեմբեր	44	4	3	1/0	2
Դեկտեմբեր	46	0	5	3/2	0
<i>2025</i>					
Հունվար					
Փետրվար					
Մարտ					
Ապրիլ					
Մայիս					
Հունիս					
<i>ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2</i>					
<i>2024</i>					
Հունվար	-	-	-	-	-
Փետրվար	-	-	-	-	-
Մարտ	-	-	-	-	-
Ապրիլ	-	-	-	-	-
Մայիս	-	-	-	-	-
Հունիս	-	-	-	-	-
Հուլիս	38	10	3	1/0	2
Օգոստոս	36	12	3	1/0	2
Սեպտեմբեր	34	14	3	1/0	2


Հոկտեմբեր	45	3	3	1/0	2
Նոյեմբեր	46	3	2	1/0	2
Դեկտեմբեր	41	7	3	1/0	2
2025					
Հունվար					
Փետրվար					
Մարտ					
Ապրիլ					
Մայիս					
Հունիս					

Առաջադրանք 1-ի վերաբերյալ ուղղիչ գործողությունները ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 6. Ուղղիչ գործողություն


N	Ուղղիչ գործողությունների հարցում	Ուղղիչ գործողության ամսաթիվ	Թարմացումը՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ուղղիչ գործողության կարգավիճակ (ըստ Կապալառուի մոնիթորինգի շաբաթական հաշվետվությունների)
1.	Շինարարական թափոնի կառավարում (շինարարական թափոն): Շինարարական թափոնը հայտնաբերվել է ծրագրի ճամբարի տարածքում: Թափոնը առաջացել է փաթեթավորված նյութերից և այլ շինարարության թափոնից, որոնք պետք է հավաքվեն առանձին տարածքում՝ նախքան այն տեղափոխելը աղբավայր:	14.10.2024	Իրավիճակը լուծվել է և տարածքը մասամբ մաքրվել է: Կապալառուին հանձնարարվել է ավարտել մաքրման աշխատանքները և խնդիրը ամբողջովին լուծել:	Մասամբ ուղղված Կուղղվի հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:
2.	Շինարարական թափոնի կառավարում (կենցաղային թափոններ): Տեղադրված աղբամանների քանակը բավարար չէ: Առաջարկվում է աղբամանների	14.10.2024	Իրավիճակը լուծվել է, և Կապալառուն գնել է հավելյալ շինարարական աղբամաններ	Մասամբ ուղղված Կուղղվի հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

<p>քանակը ավելացնել և փոխարինել վնասված աղբամանները: Վերջինս պետք է ունենա փակվող կափարիչ:</p> 		<p>լուծելու տվյալ խնդիրը: Խնդիրը պահանջում է շարունակական մոնիթորինգ և կմնա խորհրդատուի ուշադրության ներքո հաջորդ այցելությունների ընթացքում:</p>	
<p>3. Երկրորդային պահեստ վառելիքի բաքի համար: Վառելիքի բաքը պետք է</p>  <p>ապահովված լինի երկրորդային պահեստով բաքի 110%-ի ծավալով, ինչպես նաև ծածկված պետք է լինի:</p> <p>Հոկտեմբերի 14-ին ԱԶԲ-ի հետ այցելության ընթացքում էական թափոն հայտնաբերվել է երկրորդային պահեստում և վառելիքի բաքի կափարիչը պարզվել է, որ թերի է:</p>	<p>14.10.2024</p>	<p>Իրավիճակը լուծվել է և երկրորդային պահեստը մաքրվել է թափոնից:</p>	<p>Ուղղված</p> 
<p>4. Բետոնի թափոններ: Մոնիթորինգային այցելության ժամանակ կմ 31+900-ում և մի քանի այլ տարածքներում ծրագրի ՃՃ-ի երկայնքով բետոնի թափոններ է հայտնաբերվել: Կապալառուին հանձնարարվել է ձեռնարկել պատշաճ գործողություն և միջոցառումներ՝ հեռացնելու ՃՃ-ից ամբողջ բետոնի թափոնը և ապահովել թափոնների հեռացումը նախագծված</p>	<p>26.03.2024</p>	<p>Որևէ մտահոգություններ չեն դիտարկվել այստեղ: Տվյալ խնդրի վերաբերյալ անհամապատասխանության ծանուցումը եղել է 2024թ. օգոստոսի 27-ին:</p>	<p>Ուղղված</p>

	հանրային աղբավայրում 2024թ. մարտի 18-22-ը 19.03.2024թ. -ի թիվ ROQE00301/24/326 գրությամբ:		ԼՈՒԾՎԱԾ	
5.	Վառելիքի արտահոսք ճամբարի տարածքում: Այցելության ժամանակ վառելիքի արտահոսք է հայտնաբերվել ճամբարում: Աղտոտված մանրախիճը պետք է փոխարինվի և պաշտած պահեստավորում պետք է ապահովի:	15.12.2024	Կապալառուն տեղափոխել է աղտոտված նյութը ժամանակ առ ժամանակ: Տվյալ խնդիրը պահանջում է շարունակական մոնիթորինգ և կմնա խորհրդատուի ուշադրության ներքո հաջորդ այցելությունների ժամանակ: Կապալառուն հրահանգել է թարմացնել մանրախիճը շաբաթական կտրվածքով:	Մասամբ ուղղված Շարունակվող մոնիթորինգ:
6.	Մանիտարական պայմաններ ճամբարում պետք է պատշաճ կերպով շահագործվող զուգարան և լվացարանի հարմարություններ լինի:	30.06.2024	Իրավիճակը լուծվել է, և զուգարանի պայմանները բարելավվել են: Այնուամենայնիվ, առաջարկվում է փոխարինել այն պատշաճ հարմարություններով:	Մասամբ ուղղված 

Առաջադրանք 2-ի վերաբերյալ ուղղիչ գործողությունները ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 7. Ուղղիչ գործողություն

N	Ուղղիչ գործողությունների հարցում	Ուղղիչ գործողության ամսաթիվ	Թարմացումը՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ուղղիչ գործողության կարգավիճակ (ըստ Կապալառուի մոնիթորինգի շաբաթական հաշվետվությունների)
1.	Վառելիքի արտահոսք ճամբարի տարածքում: Այցելության ժամանակ վառելիքի արտահոսք է հայտնաբերվել ճամբարում: 	15.12.2024	Աղտոտված մանրախիճը պետք է փոխարինվի և պաշտած պահեստավորում պետք է ապահովվի:	Մասամբ ուղղված Կուղղվի հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

Առաջադրանք 1-ի և **առաջադրանք 2-ի** համար Կապալառուի ԲԱԱ անձնակազմը կազմակերպել է բանավոր քննարկումներ ԲԱԱ-ի վերաբերյալ աշխատակիցների և վարպետների համար: Հաշվետու ժամանակահատվածում վարորդների հետ քննարկումները սևեռված են եղել պաշտպանիչ ծածկոցների օգտագործման և վարպետների անվտանգության պատասխանատվությունների վրա, հատկապես հանրային անվտանգության: Որպես արդյունք՝ Կապալառուի վարպետներին, վարորդներին և աշխատակիցներին հիշեցրել են վարելու և երթևեկության վերահսկողության միջոցառումների և կանոնների մասին: Նրանք նաև անդրադարձել են անվտանգության հիմնական վտանգներին շինարարական գործողությունների ընթացքում, ինչպիսիք են աշխատելը փայտամածի վրա, օգտագործել սանդուղքներ, աշխատել խրամատներում և կրել անհատական պաշտպանության միջոցներ: Աշխատակիցներին և ենթակապալառուի անձնակազմին ապահովել են անհրաժեշտ ԱԱՄ-ով:

2.4 Միտումներ

Առաջադրանք 1-ի համար ծրագրի մեկնարկից սկսած արձանագրվել է ընդհանուր 62 խնդիրներ: Հաշվետու ժամանակահատվածի վերջում որևէ չլուծված խնդիրներ չի մնացել: Դա նշանակում է, որ արձանագրված խնդիրների մոտավորապես 100%-ը հաջողությամբ լուծվել է:

Առաջադրանք 2-ի համար ծրագրի մեկնարկից սկսած արձանագրվել է ընդհանուր 49 խնդիրներ: Հաշվետու ժամանակահատվածի վերջում միայն 2 խնդիրներ են մնացել չլուծված: Դա նշանակում է, որ արձանագրված խնդիրների 75%-ը հաջողությամբ լուծվել է:

2.5 Շրջակա միջավայրի վրա չնախատեսված ազդեցություններ կամ ռիսկեր

Չկան շրջակա միջավայրի վրա չնախատեսված որևէ ազդեցություններ կամ ռիսկեր, որոնք հայտնաբերվել են ընթացիկ ժամանակահատվածում **Առաջադրանք 1**-ի և **Առաջադրանք 2**-ի համար:

3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

3.1 Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում անցկացված մոնիթորինգի վերանայում

Առաջադրանք 1՝ Ագարակ հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Առաջադրանք 1-ի համար, Մ1 Երևան-Գյումրու-Բավրա մայրուղու մոտ 8.0 կմ վերակառուցման համար Ագարակ համայնքի մոտ (կմ 29+600-ից մինչև կմ 37+545) փոշու, աղմուկի և վիբրացիայի հիմնական և պարբերական գործիքային չափումներ են կատարվել: Ծրագիրը իրականացվել է մասնագիտացված կառույցի կողմից՝ հիմնված լինելով «ԱԱԲ Պրոեկտ ՄՊԸ»-ի, «Մ/ս Դայնեշչանդրա Ռ. Ագրավալ Ինֆրասիոն ՄՊԸ»-ի և «Քոնսեկտարդ ՄՊԸ»-ի կնքված պայմանագրի վրա: Տվյալ չափումների նպատակը՝ հավաքել հիմնական տեղեկատվություն՝ աղմուկի և վիբրացիայի մակարդակների վերաբերյալ, ինչպես նաև զգայուն կետերում փոշու կոնցենտրացիաների, և զնահատել աղմուկի և վիբրացիայի մակարդակները, փոշու կոնցենտրացիան զգայուն կետերում շինարարությունից առաջ և ընթացքում (աշխատանքային պայմաններ) և ներկայացնել ուսումնասիրության արդյունքները: Մանրամասն մեթոդաբանությունը և սարքավորումները, ինչպես նաև չափման կետերը և իրենց նկարագրությունը ներկայացված է ՏՇՄԿՊ-ում:

Քարտեզ 1. Առաջադրանք 1-ի գործիքային չափումների համար կետեր



Աղյուսակ 8. Առաջադրանք 1-ի փոշու չափման կատեգորիաներ

№	Նյութի անվանումը	Առավելագույն թույլատրելի կոնցենտրացիա, (մգ/մ ³)		
		Ազգային առ.	Ազգային օրական միջին	ԱՀԿ/ՄՖԿ 24 ժամ
1	PM2.5	0.16	0.035	0.025
2	PM10	0.3	0.06	0.05

Աղյուսակ 9. Առաջադրանք 1-ի աղմուկի մակարդակի չափման կատեգորիաներ

№	Շինություններ և տարածքներ	Սահմանափակ արժեքի շեմ (ՄԱՇ), դԲԱ		
		Ազգային		ԱՀԿ
		Համարժեք աղմուկի մակարդակին	Առավելագույն աղմուկի մակարդակ	Մեկ ժամ համարժեք է աղմուկի մակարդակին
1	Աշխատանքային տարածք	80		85
2	Հյուրանոցների և հանրակացարանների մոտ գտնվող տարածքներ	60	75	
3	Բնակելի շենքերին, կլինիկաներին, ամբուլատորիաներին, հանգստյան տներին, ինսամբի տներին, հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված տներին, գրադարաններին, մանկապարտեզներին, դպրոցներին և այլ կրթական հաստատություններին հարակից տարածքներ	55	70	45/55

Աղյուսակ 10. Առաջադրանք 1-ի վիբրացիայի մակարդակի չափման կատեգորիաները

№	Ամբողջ մարմնի վիբրացիա	Ուղղված և համարժեք ճզգրտված արժեքների ՄԱՇ	
		մ/վրկ ²	դԲ
1	Տրանսպորտային-տեխնոլոգիական(2 ^{րդ} կատեգորիա)	0.28	109
2	Տեխնոլոգիական (3 ^{րդ} կատեգորիա ա)	0.1	100
3	Տեխնոլոգիական (3 ^{րդ} կատեգորիա բ)	0.04	92
4	Տեխնոլոգիական (3 ^{րդ} կատեգորիա գ)	0.014	83
5	Բնակելի շենքեր, կլինիկաներ, հյուրանոցներ	0.004	72

Քանի որ բոլոր կետերը տեղակայված են բնակելի տարածքներին մոտ կամ ոչ հեռու, ստորև բերված աղյուսակների արդյունքները համեմատվում են բնակելի տարածքների ազգային և միջազգային չափանիշների հետ (օր.՝ 55/70 աղմուկի համար): Մանրամասները ներկայացված են ստորև՝

Աղյուսակ 11. Առաջադրանք 1-ի չափման կետերի աշխարհագրական դիրքը

Կետ	ԳՏՀ կոորդինատներ	Զգայուն ընկալիչներ	Մարքի գտնվելու վայրը մոտակա զգայուն ընդունիչից, մ
N1	439669.91 m E 4460351.22 m N	Ոսկեվազի գինու գործարան	Ոսկեվազ գինու գործարանից մոտ 150մ հեռավարության վրա
N2	436247.00 m E 4460322.00 m N	Բնակելի տարածք	Բնակելի տարածքից մոտ 190մ հեռավարության վրա
N3	437863.00 m E 4460255.00 m N	Ճանապարհահատված	Ախոռներին մոտ
N4	441617.46 m E 4461001.61 m N	Բենզալցակայան	Գազալցակայանից մոտ 230 մ հեռավորության վրա
N5	435700.35 m E 4460485.93 m N	Բետոնի գործարան	Շինարարական աշխատանքների ճամբարի տարածքում
N6	438631.00 m E 4460179.00 m N	Շաղվարդ գետ	Շինարարական աշխատանքների տարածքից մոտ 50մ հեռավորության վրա
N7	438630.00 m E 4460025.00 m N	Շաղվարդ գետ	Շինարարական աշխատանքների տարածքից 50 մ ներքև

2023թ. ապրիլի 4-ին անցկացված փոշու, աղմուկի և վիբրացիայի հիմնական հետազոտության արդյունքները ներկայացված են ստորև՝

Աղյուսակ 12.Մ1 Երևան-Գյումրի-Բավրա մայրուղու մոտ 8.0 կմ-ի վրա՝ Ագարակ համայնքի մոտ, փոշու (PM 2,5) չափման կետերը և արդյունքները ճանաչվել են՝ որպես հիմնական:

Կետ №	PM2.5 փոշու իրական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն թույլատրելի կոնցենտրացիա, մգ/մ ³

	1 ^{ին} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում	Միջին արժեք	Ազգային		ՄՖԿ չափանիշ
					Առավելագույն արժեք	Օրական միջին	Օրական միջին
1	0.06	0.14	0.08	0.09	0.16	0.035	0.025
2	0.07	0.06	0.08	0.07			
3	0.05	0.07	0.04	0.05			
4	0.08	0.09	0.06	0.08			
5	0.04	0.09	0.07	0.07			

Աղյուսակ 13. Մ1 Երևան-Գյումրի-Բավրա մայրուղու մոտ 8.0 կմ-ի վրա՝ Ազարակ համայնքի մոտ, փոշու (PM 10) չափման կետերը և արդյունքները ճանաչվել են՝ որպես հիմնական:

Կետ №	PM10 փոշու իրական կոնցենտրացիա, մգ/մ ³				Առավելագույն թույլատրելի կոնցենտրացիա, մգ/մ ³		
	1 ^{ին} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում	Միջին արժեք	Ազգային		ՄՖԿ չափանիշ
					Առավելագույն արժեք	Օրական միջին	Օրական միջին
1	0.07	0.18	0.08	0.11	0.3	0.06	0.05
2	0.07	0.06	0.09	0.07			
3	0.05	0.09	0.04	0.06			
4	0.08	0.13	0.07	0.09			
5	0.04	0.12	0.08	0.08			

Աղյուսակ 14. Մ1 Երևան-Գյումրի-Բավրա մայրուղու մոտ 8.0 կմ-ի վրա՝ Ազարակ համայնքի մոտ, աղմուկի մակարդակի չափման կետերը և արդյունքները ճանաչվել են՝ որպես հիմնական:

Չափում №	Աղմուկի մակարդակներ, դԲԱ				Սահմանափակ արժեքի շեմ, դԲԱ		
	Համարժեք աղմուկի մակարդակին, LAeq	Միջին արժեք	Առավելագույն աղմուկի մակարդակ, LAmax	Միջին արժեք	Ազգային		ՄՖԿ չափանիշներ գիշերային/ցերեկային ռեժիմներ
					Համարժեք աղմուկի մակարդակին	Առավելագույն աղմուկի մակարդակ	
Կետ 1							
1	54.0	55.0	61.0	64.4	55	70	45/55
2	57.5		64.0				
3	53.5		68.2				

Չափում №	Աղմուկի մակարդակներ, դԲԱ				Սահմանափակ արժեքի շեմ, դԲԱ		
	Համարժեք աղմուկի մակարդակին, LAeq	Միջին արժեք	Առավելագույն աղմուկի մակարդակ, LAmax	Միջին արժեք	Ազգային		ՄՖԿ չափանիշներ գիշերային/ցերեկային ռեժիմներ
					Համարժեք աղմուկի մակարդակին	Առավելագույն աղմուկի մակարդակ	
Կետ 2							
1	40.3	42.1	48.1	48.5	55	70	45/55
2	44.0		49.4				
3	42.1		47.9				

Չափում №	Աղմուկի մակարդակներ, դԲԱ				Սահմանափակ արժեքի շեմ, դԲԱ		
	Համարժեք աղմուկի մակարդակին, LAeq	Միջին արժեք	Առավելագույն աղմուկի մակարդակ, LAmax	Միջին արժեք	Ազգային		ՄՖԿ չափանիշներ գիշերային/ցերեկային ռեժիմներ
					Համարժեք աղմուկի մակարդակին	Առավելագույն աղմուկի մակարդակ	
Կետ 3							
1	46.1	42.6	52.2	48.1	55	70	45/55
2	43.9		49.0				
3	37.7		43.3				

Չափում №	Աղմուկի մակարդակներ, դԲԱ				Սահմանափակ արժեքի շեմ, դԲԱ		
	Համարժեք աղմուկի մակարդակին, LAeq	Միջին արժեք	Առավելագույն աղմուկի մակարդակ, LAmax	Միջին արժեք	Ազգային		ՄՖԿ չափանիշներ գիշերային/ցերեկային ռեժիմներ
					Համարժեք աղմուկի մակարդակին	Առավելագույն աղմուկի մակարդակ	
Կետ 4							
1	55.1	61.0	63.2	68.8	80		85
2	66.7		74.0				
3	61.3		69.4				

Չափում №	Աղմուկի մակարդակներ, դԲԱ				Սահմանափակ արժեքի շեմ, դԲԱ		
	Համարժեք աղմուկի	Միջին	Առավելագույն աղմուկի	Միջին	Ազգային		ՄՖԿ չափանիշներ գիշերային/ցերեկային ռեժիմներ
					Համարժեք աղմուկի	Առավելագույն աղմուկի	

	մակարդակին, LAeq	արժեք	մակարդակ, LAmax	արժեք	մակարդակին	մակարդակ	
Կետ 5							
1	53.9	56.3	59.3	62.7	80		85
2	52.8		58.8				
3	62.3		70.2				

Աղյուսակ 15. Մ1 Երևան-Գյումրի-Բավրա մայրուղու մոտ 8.0 կմ-ի վրա՝ Ագարակ համայնքի մոտ, աղմուկի մակարդակի չափման կետերը և արդյունքները ճանաչվել են որպես հիմնական:

Չափում №	Վիբրացիայի մակարդակներ և միջին արժեքներ, մ/վրկ ²		Ուղղված և համարժեք ճշգրտված արժեքների ՍԱՇ
	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ ²	Միջին արժեք, մ/վրկ ²	
Կետ 1			
1	0.07	0.10	0.28
2	0.15		
3	0.08		

Չափում №	Վիբրացիայի մակարդակներ և միջին արժեքներ, մ/վրկ ²		Ուղղված և համարժեք ճշգրտված արժեքների ՍԱՇ
	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ ²	Միջին արժեք, մ/վրկ ²	
Կետ 2			
1	0.05	0.07	0.28
2	0.07		
3	0.10		

Չափում №	Վիբրացիայի մակարդակներ և միջին արժեքներ, մ/վրկ ²		Ուղղված և համարժեք ճշգրտված արժեքների ՍԱՇ
	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ ²	Միջին արժեք, մ/վրկ ²	
Կետ 3			
1	0.10	0.08	0.28
2	0.06		
3	0.09		

Չափում №	Վիբրացիայի մակարդակներ և միջին արժեքներ, մ/վրկ ²		Ուղղված և համարժեք ճշգրտված արժեքների ՍԱՇ
----------	---	--	---

	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ ²	Միջին արժեք, մ/վրկ ²	
Կետ 4			
1	0.02	0.04	0.28
2	0.03		
3	0.06		

Չափում №	Վիբրացիայի մակարդակներ և միջին արժեքներ, մ/վրկ ²		Ուղղված և համարժեք ճշգրտված արժեքների ՍԱՇ
	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ ²	Միջին արժեք, մ/վրկ ²	
Կետ 5			
1	0.04	0.05	0.28
2	0.08		
3	0.03		

Չափումների ամփոփումը հետևյալն է՝

Փոշի՝

1. Չափման կետում ցերեկային տարբեր ժամանակահատվածներում փոշու մոլեկուլների իրական կոնցենտրացիաները չեն գերազանցել առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները: Ինչպես ներկայացված է աղյուսակներում, փոշու մոլեկուլների հիմնական իրական կոնցենտրացիաները գերազանցում են օրական միջին առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները (և՛ ազգային, և՛ ՄՖԿ չափանիշներ):

Աղմուկ՝

2. Չափման կետում ցերեկային տարբեր ժամանակահատվածներում անցկացված աղմուկի մակարդակի չափումների արդյունքում՝ համարժեք և առավելագույն աղմուկի մակարդակները գտնվել են սանիտարական նորմերով սահմանված սահմանափակ արժեքի շեմերում:
3. Կարևոր է նշել, որ աղմուկի մակարդակը 5 և 4 կետերում հիմնականում ազդված է Երևան-Գյումրի մայրուղու ինտենսիվ երթևեկությունից (նշված կետերը տեղակայված են անմիջապես մայրուղու մոտ), այսպիսով աղմուկի մակարդակները միշտ բարձր են:

Վիբրացիա՝

1. Վիբրացիայի չափումների արդյունքները գտնվում են սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի մակարդակներում:

ՀՀ-ում մակերևութային **ջրերի** որակը վերահսկվում է ԵՄ-ի ջրային շրջանակային հրահանգի սկզբունքներին համապատասխան: Այս համակարգը սահմանված է ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի թիվ 75-Ն որոշմամբ և գործում է 2013 թ. հունվարից: Մշակվել է մակերևութային ջրերի որակի դասակարգման սխեմա, որը յուրաքանչյուր պարամետրի համար նախատեսում է 5 դաս: Այս դասերն են՝ գերազանց (I դաս), լավ (II դաս), միջին (III դաս), վատ (IV դաս) և շատ վատ (V դաս): Դասերը տարբերվում են՝ կախված մակերևութային ջրերի նախատեսված օգտագործման նպատակից:

Աղյուսակ 16. Մակերևութային ջրերի որակի դասերը կախված են Առաջադրանք 1-ի ջրի օգտագործման նպատակներից

Նպատակ	Նշումներ	Դասեր				
		Դաս I, գերազանց	Դաս II, լավ	Դաս III միջին	Դաս IV, վատ	Դաս V, շատ վատ
Ազգային ջրային պաշար		✓	✓	✓	✓	✓
Ջրային հոսքերի պահպանում		✓	✓	-	-	-
Էկոհամակարգեր, ձկնաբուծություն/պահպանում	Սաղմոններ	✓	✓	-	-	-
	Ծածաններ	✓	✓	✓	-	-
Ոռոգում		✓	✓	✓	✓	-
Արդյունաբերական ջրօգտագործում		✓	✓	✓	✓	✓

Նպատակ	Նշումներ	Դասեր				
		Դաս I, գերազանց	Դաս II, լավ	Դաս III միջին	Դաս IV, վատ	Դաս V, շատ վատ
Էներգիայի արտադրություն		✓	✓	✓	✓	✓

Շաղվարդ գետից ջրի նմուշառումը իրականացվել է շինարարական աշխատանքներից առաջ՝ Կատարողի չափագրող ինժեների կողմից 2023 թ. հուլիսի 7-ին: Նմուշառված ջրի քիմիական վերլուծությունը կատարվել է Շրջակա միջավայրի ազդեցության մոնիթորինգի կենտրոնի լաբորատորիայում: Ստացված արդյունքները գնահատվել և համեմատվել են ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ սահմանված ջրի որակի նորմերի հետ: Ջրի որակի նորմերն ու պարամետրերը սահմանված են 14 ավազանների համար, ներառյալ՝ Քասաղ գետի ավազանի (Շաղվարդ գետ) համար: Քասաղ գետի ավազանի ջրի որակի պարամետրերը, համաձայն ՀՀ կառավարության թիվ 75-Ն որոշման, ամփոփված են 16-րդ աղյուսակում:

Աղյուսակ 17. Քասաղ գետի ավազանի ջրի որակի պարամետրերը

Որակի պարամետրեր	Կատեգորիա					Մարմին
	I	II	III	IV	V	
BOD	3	5	9	18	>18	մգO ₂ /l
COD	10	25	40	80	>80	մգO/l
Հանքայնացում	95,8	191,6	1000	1500* *ռոռզման համար 1000	>1500	մգ/l
Կոշտություն	1,07	10	20	40	<40	մգ-էկվ/l
Հատուկ էլեկտրական հաղորդակցություն (EC)	148,4	296,8	1000	1500* *ռոռզման համար 1000	>1500	μS/սմ ²

Ընդհանուր կախյալ պինդ նյութեր (TSS)	8,1	9,8	16,3	32,6	>32,6	մգ/լ
Ֆոսֆատ իոն	0,060	0,1	0,2	0,4	>0,4	մգ/լ
Սուլֆատ իոն	15,3	30,6	150	250	> 250	մգ/լ
Քլորիդ իոն	3,5	7,0	150	200	> 200	մգ/լ
Նիտրատ իոն	0,272	2,5	5,6	11,3	>11,3	մգ/լ
Նիտրիտ իոն	0,011	0,06	0,12	0,3	>0,3	մգ/լ
Ամոնիում իոն	0,033	0,4	1,2	2,4	> 2,4	մգ/լ
Մագնեզիում	3,3	50	100	200	>200	մգ/լ
Կալցիում	18,5	100	200	300	>300	մգ/լ
pH	սահմանված չէ					
Պիտություն/թափանցիկություն	սահմանված չէ					

Առաջադրանք 1-ի ջրի որակի չափման արդյունքներ և գնահատում (ճանաչվել է՝ որպես հիմնական)

Շահվարդ գետից ջրի նմուշառումը շինարարական աշխատանքներից առաջ իրականացվել է Կատարողի չափագրող ինժեների կողմից **2023 թ. հուլիսի 7-ին՝** N6 և N7 կետերում: Շահվարդ գետից նմուշառված ջրի քիմիական վերլուծության արդյունքները ներկայացված են 17-րդ աղյուսակում:

Աղյուսակ 18. Շաղվարդ գետից վերցված ջրի քիմիական վերլուծության արդյունքները

N	Չափված ցուցիչ	Չափման միավոր	Չափված արժեք		Օգտագործված ստանդարտ մեթոդ
			Կետ 6	Կետ 7	
1	Ընդհանուր կախյալ պինդ նյութեր (TSS)	մգ/լ	1.5	5.2	ISO 11923
2	Կոշտություն	մգ/լ	1.08	2.37	Հաշվարկային
3	BOD ₅	մգO ₂ /լ	1.56	1.07	ISO 5815-1
4	COD	մգO/լ	15	25	ISO 6060
5	Հատուկ էլեկտրական հաղորդակցություն (EC)	մգ/լ	145	378	ISO 7888
6	Հանքայնացում	մգ/լ	94	246	
7	Սուլֆատ իոն	մգ/լ	6.103	12.662	ISO 10304-1

8	Քլորիդ իոն	մգ/լ	5.455	24.90	
9	Նիտրատ իոն	մգ/լ	0.771	1.288	
10	Ֆոսֆատ իոն	մգ/լ	0.154	0.432	ISO 6878
11	Նիտրիտ իոն	մգ/լ	0.0660	0.797	ISO 6777
12	Ամոնիում իոն	մգ/լ	0.089	0.151	ISO 7150-1
13	Մագնեզիում	մգ/լ	5.285	12.15	ISO 17294-2
14	Կալցիում	մգ/լ	12.75	27.19	

Եզրակացություն՝

Նմուշառված ջրի քիմիական վերլուծությունը կատարվել է Շրջակա միջավայրի ազդեցության մոնիթորինգի կենտրոնի լաբորատորիայում, իսկ արդյունքները գնահատվել և համեմատվել են ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի թիվ 75-Ն որոշմամբ սահմանված ջրի որակի նորմերի հետ: Շաղվարդ գետի ջրի որակի դասակարգումը տատանվում է II և III կարգերի միջև: II կարգի դեպքում մի շարք ցուցանիշներ գերազանցում են ՀՀ կառավարության թիվ 75-Ն որոշմամբ սահմանված սահմանային արժեքները, մասնավորապես՝

- Ֆոսֆատ իոն (կետեր N6 և N7)
- Նիտրիտ իոն (կետեր N6 և N7)
- Հանքայնացում (կետ N7)
- Հատուկ էլեկտրական հաղորդակցություն (EC) (կետ N7)
- Քլորիդ իոն (կետ N7)

III կարգի դեպքում միայն ֆոսֆատ իոնի ցուցանիշն է Կետ N7-ում գերազանցում ՀՀ կառավարության թիվ 75-Ն որոշմամբ սահմանված սահմանային արժեքները: Կարևոր է նշել, որ շինարարական աշխատանքները չեն կարող ազդել նշված ցուցանիշի վրա, քանի որ որևէ գործողություն չի անցկացվում ջրի աղբյուրի մոտ:

Հետևյալ կետերը ընտրվել են պարբերական գործիքային չափումների համար, որոնք անցկացվել են **N1, N4 և N5** կետերում **2024թ.-ի հուլիսի 29-ին**:

Չափման կետի մոտակայքում չափումների ընթացքում գործում էին հետևյալ տեխնիկաները (Աղյուսակ 18)

Աղյուսակ 19. Տեխնիկաների այն տեսակները, որոնք աշխատել են տարածքում Առավելագույն 1-ի չափումների ընթացքում

Կետ №	1 ^{ին} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում
1	մեկ բեռնատար, երեք էքսկավատոր	-	մեկ բեռնատար, երեք էքսկավատոր
